ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/54

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձը)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.05.2018թ. թիվ 03/26-3/8806-18 գրությամբ «Տաշիր Կար» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 06953067/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1674 գրության հիման վրա, 16.05.2018թ. նախաձեռնել է «Տաշիր Կար» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1674 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Տաշիր Կար» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց «Տաշիր Կար» ՓԲԸ-ի հայտը մերժել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Տաշիր Կար» ՓԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տաշիր Կար» ՓԲԸ-ն 01.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ իր դիրքորոշումն է հայտնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով վերջինիս մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018թ. հունվարի 11-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերի (այսուհետ՝ Հրավեր) պահանջների 5.2 կետի՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1674 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Տաշիր Կար» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց «Տաշիր Կար» ՓԲԸ-ի հայտը մերժել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Տաշիր Կար» ՓԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տաշիր Կար» ՓԲԸ-ն 01.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ իր դիրքորոշումն է հայտնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով վերջինիս մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018թ. հունվարի 11-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերի (այսուհետ՝ Հրավեր) պահանջների 5.2 կետի՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք

(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հրավերի պահանջների 8.2 կետում նախատեսված է, որ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հայտնում ենք Ձեզ, որ մեր կողմից վերոնշյալ մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկի 5-րդ չափաբաժնի (որի մասով Ընկերությունը ճանաչվել է հաղթող), 4-րդ սյունակը (ԱԱՀ տառերով և թվերով վերտառությամբ) ընդհանրապես չի լրացվել: Այսինքն, Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկն ի սկզբանե ներկայացված է եղել Հրավերի պահանջներին անհամապատասխան, որպիսի պայմաններում այն ենթակա էր մերժման ՀՀ պաշտպանության նախարարության կողմից»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Արա Յավրումյանը և ներկայացուցիչ Միքայել Վարդգեսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.05.2018թ. թիվ 03/26-3/8806-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.05.2018թ. թիվ ԴՎԱ/1674 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Տաշիր Կար» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.02.2018թ.

նիստի թիվ 3, և 20.03.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Տաշիր Կար» ՓԲԸ-ի 01.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Տաշիր Կար» ՓԲԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Տաշիր Կար» ՓԲԸ-ի կողմից մրցույթի 5-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը կազմել է 30,660,000 (տառերով՝ երեք միլիոն վաթսունվեց հազար) ՀՀ դրամ:

23.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Տաշիր Կար» ՓԲԸ-ի գնային առաջարկը գնahատել հրավերի պահանջներին համապատասխանող:

Նույն արձանագրության 3.2 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Տաշիր Կար» ՓԲԸ-ի կողմից մրցույթի 5-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկում առկա է անճշտություն, մասնավորապես, տառերով և թվերով արտահայտված տվյալները չեն համապատասխանում, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հանձնաժողովը հիմք է ընդունել տառերով գրված գնային առաջարկը:

Վերը նշված արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Տաշիր Կար» ՓԲԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից՝ մրցույթի 5-րդ չափաբաժնի մասով, իսկ 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը 12.03.2018թ. ծանուցել է Ընկերությանը հայտերի գնահատման արդյունքում 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու մասին և առաջարկել ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը:

«Տաշիր Կար» ՓԲԸ-ն 14.03.2018թ. գրությամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ապրանքների արժեքի հաշվարկի մեջ տեղ է գտել տեխնիկական վրիպակ, այն է՝ տառերով և թվերով արտահայտված տվյալները չեն համապատասխանում, և Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել տառերով գրված տարբերակը (երեք միլիոն վաթսունվեց հազար): Ընկերությունը նշել է, որ ապրանքների ինքնարժեքը համաձայն նույն գրությանը կից ներկայացված հաշվարկի, կազմել է 23,652,000 ՀՀ դրամ՝ 7,300 միավոր վերնաշապիկի հաշվարկով, առանց հարկերի, ուստի Ընկերությունը փաստում է, որ արժեքի նման եղանակով հաշվարկման դեպքում ապրանքների արժեքն էականորեն ցածր է ապրանքների ինքնարժեքից: Ընկերությունը վկայակոչել է Հրավերի 5.1 կետը, որի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, ինչից եզրակացրել է, որ ստեղծված իրավիճակում Ընկերության գնային առաջարկը ենթակա է մերժման:

20.03.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Տաշիր Կար» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է «Տաշիր Կար» ՓԲԸ-ի հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:
- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/25» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.13 կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 5-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է թվերով և տառերով:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ իր առարկություններ: Ըստ վերջինիս, «Տաշիր Կար» ՓԲԸ-ին Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղն

զբաղեցրած մանակից ճանաչելու Հանձնաժողովի որոշումը կայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, հրավերի 5-րդ հավելվածի՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակիցը պարտավոր էր լրացնել թվերով և տառերով՝ (0 (զրո)), ինչը Ընկերության կողմից չի լրացվել՝ ոչ տառերով, և ոչ էլ թվերով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ նշված հանգամանքը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովը պարտավոր էր մերժել Ընկերության գնային առաջարկը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տաշիր Կար» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.05.2018թ. թիվ 03/26-3/8806-18 գրությամբ «Տաշիր Կար» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 06953067/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ